ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 դեկտեմբերի 2013թ. թիվ 319-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.14 կետի ա) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ մասի 50-րդ կետի՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հաստատել ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. նոյեմբերի 19-ի թիվ 243-Ա որոշմամբ ստեղծված ներմարզային երթուղիների ընտրության մրցութային հանձնաժողովի 06.12.2013թ. նիստի ամփոփիչ արձանագրությունը (կցվում է)՝ 2013թ. նոյեմբերի 28-ին Տաշիր և նոյեմբերի 29-ին Վանաձոր քաղաքներում անցկացված ներմարզային սպասարկման ժամկետը լրացած և թափուր երթուղիները փոխադրողներին հատկացնելու մրցույթի հաղթողներ ճանաչելու վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 6
ք.Վանաձոր